

69. ԱԴԻ ՈՒ ԲՈՒԴԻ

Կէղնի, չէղնի իրիկ ու կնիկ մի՝ Ադի ու Բուդի, էրկուա լէ ծուռ ֆն, Կէղնի ուրանց խորոտիկ ախչիկ մե։

Թագավորու տղեն գիգա դընցնի, էդ խորոտ ախչիկ կտեսնի, ի՞նչ դինա թը ծուռ ախչիկ է։ Կըսե. «Ինչ էղնի, չէղնի ես իդրան պըտի առնիմ»։ Համալ օր խորոտիկ, ընդրա շող ուր քիթ ու բերնի շհոր գիտա ուր էրես։

Գնցնի, կկանի, զէդ ախչիկ կառնի։ Կառնի կէրթա ուր քաղաք։

Կմնա օր մե, էդ ախչկա հեր ու մեր գելնին, կեսին. «Էրթանք մեր ախչկան տեսնա»։

Կըսե.— Բուդի։

Կըսե.— Ի՞նչ է, Ադի։

Կըսե.— Ի՞նչ տանինք թագավորի հանդես։

Բուդին կըսե.— Ի՞նչ կա օր տանինք հանդես։ Մըզի կա խալի մե, ջուխտըմ է ջըզմե, տիկմ լէ եղ։

Կառնին զիրեք լէ. դընգին ճամփախ ու կէրթան։ Կէրթան, կէրթան, գիգան ծառի մե ռաստ, չո՞ր, չո՞ր ծառ մե կէղի, կոցեր է, տերև չկա, թուփ չկա։

Կըսե.— Ադի։

Կըսե.— Ի՞նչ է Բուդի։

Կըսե.— Իդա ծառ չորցեր է, մեխք է, իդոր ճրող չկա։

Կրսե.— Ի՞նչ պրտի էնինք ըդրան, ճուր չկա դեդա։

Խել խելաց կզարկին, կֆքրին, ճուր չկա։

Իրիկ կհարցու կնկան.— Ախբր իմա՞լ պտի էղի իդրա հալ։

Կրսե.— Արի, համ մենք ինք ղադրի, շալկեր ինք, դադրեր ինք, էլ չկրնանք, ու համ իդա ծառ լէ չորցեր է, մեղք է, արի էդ եղ հ՝ըլնանք վրեն ճրի տեխ։

Լցեցին զեղ, չէ օր գետին թամիզ, չոր, գետին ծծկեց ու գնաց։

Ըսաց.— Տեսա՞ր ապա, ինչ խադար ծարվցեր էր, իմալ խմեց, պուտ մե չթորկեց մըզի, համ խեր էրեցինք ծառուն, համ լէ մեր շալակ թեթվեցավ, թըխ էղնի մեր հոր հոգուն, դե քելի էրթանք։

Մնաց, խալին մեկ շալկեց, ջուխտ ջղմեն լէ մեկ ըռնեց ուր ծեռք։ Ու քելեցին գացին, գացին, գացին տեսան օր լագլագ մի ընդիեն էկավ. կանուկ է. օտ մի կվերցու, մեկ դրե, ուրին կքելե կանանչ կուտե, հայվան է։

Կրսե.— Ադի։

— Ի՞նչ է, Բուդի։

— Իդա լագլագ կիշի՞ս։ Էդի հ՝որի՞ էդմլա ուր օտներ կվերու ու կդրե։

Կրսե.— Կմրսի։

— Ի՞նչ էնինք օր ըդոր օտներ կմրսի։

Կրսե.— Թագավորին շատ մալ կա, շատ դովլաթ կա, ի՞նչ պրտի մեր ջըզմեք հավնի, չհավնիր մեր ջղմեսներուն, էնի աղեկ փողիկ, կոլոշ կխագնի, կխագի՞ զմեր ջղմեք։ Խեր կէղի էղ լադլըգուն օր հագնի ղէդ ջղմեք, մեր խոր ու մոր հոգուն։

Տարին կդրին, ջուջու կէնին, կդրին լագլգու հ՝առեճ. լագլագ չէ՞ օր ջանավար է, կթոնի կէրթա։

Կրսե.— Ադի։

Կրսե.— Ի՞նչ է, Բուդի։

Կրսե.— Էդ հ՝որի՞ թռավ գնաց։

Կրսե.— Կամչնա, մեք քելե էրթանք, էն դիգա կհագնի։ Հը՞, տեսա՞ր ապա խերմ լէ էդի էր, իդրա օտքեր տաքցու, դե քելի էրթանք։

Կվերցուն խալին, կթալին թևին ուրանց ու կքելին։ Կըսին, դե քելինք ինդրանք թըխ էրթան մեզի դուռ էնինք, մեր հոր ու մոր խեր է, մեք լէ թեթևցանք, թագավոր ի՞նչ կէներ զէտոնք, թագավոր հարուստ է, ունավոր է։

Գացին։ Գացին, գացի՞ն, տեսան օր չմփչմփան գետ մի գուգա, ուր տեխ լէ քարոտ է։

Ըսաց.— Ադի։

Ըսաց.— Ի՞նչ է, Բուդի։

Ըսաց.— Ըդ ճուր հ՝որի՞ էդմլա կդողա։

Ըսաց.— Դու չըս տեսնա՞, էդի մրսեր ա, ընդոր ապով կդողա։

Ըսաց.— Ասլա, իդոր հալ ի՞մալ պտի էղնի։

Ըսաց.— Ի՞նչ պըտի էնինք, թագավորին հմալ խալի ու խաչիչա կա ուրին քոշկու սարեն օր ուրին հեչ պետք չէ։

— Ապա իմա՞լ էնինք։

Ըսաց.— Հարի օդա մեք խեր ու խերյաթ էրեր ինք, արի էդա խալին լէ թալինք վըր ճրին, թըխ տաքնա։

Վերցուցին հ՝երկեն խալին լորտեցին ճրի վրեն, ճուր խլմլեց զխալին, էրեց թոփ մի ու քշեց տարավ։

— Ի՞նչ խադար էր մրսե, Ադի, հմա պլուլվավ ինք ու տաքցավ ու գնաց, խեր էղավ մզիկ։

Ըսին.— Է՜հ, օրհնյալ աստված, փրցանք, դումռա խեր մե էրեցինք, էղավ իրեք խեր։

Գացին։ Շատ գացին ու գացին, թագավորու քոշկն երևաց։

Պզտիկ տղե մի գիգա ռաստ, կհարցսնին.

— Կուրրան, թագավորի քոշկ ո՞ր մեկն է։

Կըսի.— Արի՜, արի՜ ցուցում քըզի։ — Տղեն կհարցու.— Դու ի՞նչ գիդաս թագավորին։

Կըսե.— Թագավորի հարսի հերն ու մերն իմ։

Տղեն կըսե.— Տո, իդա իմա՞լ կէզի, թագավորի խնամի։

Գերթվնան, կասին.— Վոլլա, բիլա թագավորի խնամին ինք, թագավորի հարսի հեր ու մերն ինք։

Գելին կէրթան թագավորի խարսին անգնշկլա կբերին, կըսին. «Քու հեր ու մեր էկած են»։

Էն լէ մադեն կէնե, կըսե. «Օդնակոտոր էկեն, ո՞րն ըսե թըխ իդոնք իդան»։

Ախր ջիդար էր, գթաց վրեն, բռնեց, բերեց տուն, հաց կերցուց, ըսաց.

— Հ՝որի՞ էկաք, ծըզի ի՞նչ կեր օդի։

Վերուց ըսեց.— Լաո, դու մեկուճար ախչիկ էր, իդա քանի տարի չընք տեսեր ինք, էկանք քու տեսնելուն համար։

— Էկաք, էկաք, բարով, խերով։

Կառնե յաթաղ, ղհեր ու մեր, չցուցու կեսուր, կեսրերու, ինքն ուրան կշայե հար ճամփցուն, թըխ չտեսնան, ամոթ է։ Կտանե, զտեղ կթալե մըղազեն, կըսե. «Խեղճ ին. ըստեխ խնձոր է, նուռ է,

թուզ է, եմիշ է, թըխ էրթան ուտին»։ Կփակե զէդ դուռ ու կէրթա դիվան։

Ադին ու Բուդին կնստին ուրանց տեխի մեջ, թամաշա կէնին ու կֆքրին։

Կըսա.— Ագի։

Կըսե.— Ի՞նչ է, Բուդի։

Կըսե.— Մեր ախչիկ թագավորի հարս է, չպրապի իդա ժեխեր ավլե, ելի չափուկ հանե, թիակ լէ հանե գոմռա ճուր մե, ճաղցի առու մե գընցնի տոնով, ավլինք ու հըլնանք առուն, հատկինք ավլինք հարի լուսուն, ախչիկ իդա խնդանա։

Էդ բոլոր եմիշներ թիփով ու չափուկով դուրս լցին առուն, ավլեցին, իստկեցին թամուզ ու էկան նստան ուրանց տեխ, իշկեցին ու ուրախըցան։

— Տեսա՞ր ապա իմալ ավլեցինք, թեմիզցուցինք փրցանք, մեր ախչիկ ինչ լավ աղեզկութեն էրեցինք։

Լուսցավ։ Ախչիկ պտի առնե ակռատ ու իդա, կըսե.

— Մամո՜, մամո՜, զդուռ բաց։

Կըսե.— Լաո՜ մենք չքներ ինք, դու հ՚որի՞ էդմլա շուտ էլար էկար։

Կըսե.— Քու տուն ավրի, կես օր է, բաց դուռ բերիմ ծըզի ակռատ կերեք։

Կբանան զդուռ, կըսե.— Հ՚որի՞, չքներ իք։

Կըսե.— Հար էդ գահ, ծեր ժեխեր կիստկինք։

Կըսե.— Իմա՞լ, ժեխ հ՚ո՞ւսա էր իմ տուն, Իսուս Քրիստոս։

Ախչիկ օր զդուռ կբանա, կիշե, կծռի, կթիի վըր չոքերուն. «Հա՜յ վախ, հա՜յ վախ, իդա ծռեր ինչ էրեցին իմ գլուխ, էլ իմա՞լ իմ կեսուր կեսրերոջ երես էլնամ. ի՞նչ ջուաբ իտան իգոց»։ Կերցուց զէդոնք, ախըր ի՞նչ էնե։ Մնաց հ՚իրկուն խազերու քոխ կքնցու։

Կըսե.— Ագի։

— Ինչ է, Բուդի։

Կըսե.— Կաշի՞ս, ըդ խազեր իմալ կփճճվին, կքճճվին։

Կըսե.— Հորի՞ էդմլա կէնին։

Կըսե.— Օշլոտած ին, մեր ախչիկ չպարապի, խեղճ է։

Կըսե.— Ապա իմա՞լ էնինք։

Կըսե.— Հան պղինձ, հան է վառելիք, օճառ, ճուր լէ դռնեն կընցնի, մըզի հ՚որի՞ ծեռ չկա՞ օր ճուր տաքցունք, լվանանք իդ-

բանց գլխներ օր ուրհաթին, ախբր խեր է, մենք շատ խեր էրեր ինք, էսօր լէ խեր պըտի էնինք։

Էլան, զօճախ կպըցին, պղինձ դրին վրեն ու կրակ վառեցին, վազեցին ու առվեն ճուր կրեցին, լցին պղինձ. փետն էր վառավ, ճուր էփավ։

— Ադիկ։

— Ի՞նչ է, Բուդիկ։

— Դե էլի խազեր բի լվանանք։

Բերեցին զխազեր մեկ մեկ քփսեցին մեջ քլքլման ճրին, սատկցուցին ու տարան դրեցին թառ։ Ջմեն լըմըցին, լվացին փըրցան ազատվան։ Տարան շարեցին թառ, էկան նստան մեջ ուրանց տեխին։

Ջէ օր հ՝ըմեն սատկած ին, նա կխլվլան նա, բան։

Կըսե.— Ադի։

Կըսե.— Ի՞նչ է, Բուդի։

Կըսե.— Աշե տես, իմալ ուհաթան, նա կքերվին, նա կպճճվին, ուրանց ուհաթ քնան։ Էղավ խինդ խեր էրեցինք մըզիկ։

Լուսցավ։ Գիդա ախչիկ։ Խազբանդ լէ պտի դա խազեր թողի, տանի արծցու։

Ախչիկ կբոռա.— Մամո՜, մամո՜, զդուռ բաց, խազբանդ էկեր է զխազեր կտանի կարծցու։

Էլան բացին զդուռ, էկավ խազբանդ, բոռաց. «Բուլի, բուլի, բուլի»։ Բուլի, բուլի չկա։

Խազբանդ դիդա զփետ խըթի պատին։

Կըսե.— Քա՜, տղա մ՝էնե, մ՝էնե, լոխկցած ուհաթած ու քնած ին, Ախչկան կըսին.— Դու չկերներ լվաներ ըդոնց գլխներ, հմալ օշլոտեր էր, լա՜, էսա կիշեր հուհու չքներ ինք, զքու խազերն ինք լվացի։

— Սեվ դուման իգա ծեր արևուն, խազ հ՝ոդի իսկի կլվացվի՞, հ՞ուր իք լվացի զէդ խազեր։

— Քա՜, լա՜, շեն մնա թագավորի տուն, վառելիք շատ, պղինձ հանդե հ՝ոդա։

Կըսե.— Իմա՞լ պղինձ, տաքցուցեր իս ճուր։

Կըսե.— Խա՜, առվեն կրեր իմ ճուր, տաքցուցեր իմ, լոխկցուցեր իմ, ուհաթած ու քնուկ ին։

Կըսե.— Վա՜խ, վա՜խ, էդ ի՞նչ փորցանք բերեցիք իմ արևուն։ Դուք օտնակոտոր, վզնամանտար էկեք։

Հ՝ելան աչքին օր թը խազեր հ՝մե՜ն սատկուկ ին, թափեցին մեջ ճրին։

— Դուք մեռնիք, ծեր հոգին ելնա, ծրզի պտի ըսօր դևեսներոս մեջ քնցում։

Զօր, ցերեկ հ՚ընցուցին, էկավ իրիկուն։ Տարավ զէդոնց տեխ թալեց դևեսներուն մեջ։ Կպառկին ու կֆքրին.

Կըսե. —Ադի։

— Ի՞նչ է, Բուդի։

Կըսե.— Հ՚ելի, հ՚ելի քիչ մը հեծնինք դևեք, փըշը մը մըզի ջրինդ քշինք, խառ իտանք, հ՚մեն օր դևա՞ գընգնի մեր ծեռք։

Կըսե.— Վախենանք պատինք։

Կըսե.— Արի կուբր ա հոնա հալինք, ու հ՚ըլնանք դևեսներու պառեկին, ելնանք նստինք վրեն, կջալինք վրեն, էլ չպատինք։

Բերեցին խուշխանե մի, կուրր հալեցին, էրին ճուր, լցին դեվեսներու պառեկին վրեն, նստուկ տեխ ու էլան էրկուս լէ շուտ շուտ նստան վրեն։ Է, քրքրման կուրր, տաք, եռման կուրր, ուրանք նստան վրեն, ուրանք լէ դևեք լէ սատկան։ Օրհնյալ զաստված։

Գիդա դեվաչին օր թը դևեք տանի արծցու, զմեն կանգցուց քշեց դուրս, մնաց էրկու դևա։ Գնաց օր էդ էրկու դևեք լէ կանգցուցեր։ Գիգա կիշի օր էրկու իսան՝ կնիկ մի ու մարթ մի վրեն նըստուկ։ Կըսե. «Ելեք վեր, իմ դևեք քշիմ». կասե, չասե, չլսին իսկի։ Մեռուկ ին, ի՞նչ կլսին։ Կլլկե, կլլկե, կիշե օր մեռած են։ Կը ֆքրի, կիշկե օր թը դևեքներու վիզ թալուկ, փիթցուկ է։ «Հա՜յ վախ,— կըսե,— էդ իմա՞լ բան է». կէրթա հավար կթալի թագավորի տուն։

Բեսլամեն կէրթա թագավորու խաբսին կըսե.— Խաբս խանըմ, արի տես, իդա դևաչին կըսե. «Էրկու դևա է փիթցի, էրկու իսան լէ վրեն է»։ — Դևաչին ի՞նչ խաբար ունի, թե էդրանք խաբսի խերն ու մերն ին, գինա թե բաշխա մարթ է։

Հարսին օր թը կեսին, կըսե.— Հե՜յ վախ, էմլա իմ ծուռ խոր ու մոր բաներ է էդի։

Գիչնա ու կէրթա, ցած կքաշի զհեր ու մեր, ինչ կէնա, չփրցնա։

Ինչ կէնին չէնին՝ կփրցնին կտանին ու կպահին։

Թագավորի հարս շուքր գիտա աստծուն թը՝ «Փրծա ու ազատվա»։